ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով իրականացվող գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան

31 հոկտեմբերի 2019թ. Ժամը 14:00

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Շ. Հարությունյան, Հ. Մելիքյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Ա. Մխիթարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ.Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

2.1. ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար հայտարարված Վառելիքի ձեռքբերման գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակիցների անվանումը	Էլ. փոստի հասցե
1	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	tendercps@gmail.com
2	«Ֆլեշ» ՍՊԸ	flashltdtender@gmail.com

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

3.1 Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝ «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ և «Ֆլեշ» ՍՊԸ:

4.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

4.1 «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ և «Ֆլեշ» ՍՊԸ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

5.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

5.1 «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ և «Ֆլեշ» ՍՊԸ մասնակիցները կազմել և ներկայացրել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

6.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

6.1 Գնման առարկա է հանդիսանում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Վառելիքի ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնում:

Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պայմաններին համապատասխան գնահատված մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

N	Հայտ ներկայացրած կազմակերպություններ	Բենզին պրեմիում-2000 լիտր		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ	666,666.67	133,333.33	800,000
2	«Ֆլեշ» ՍՊԸ	675,000	135,000	810,000

Գնման ընթացակարգի մասնակիցների հայտով ներկայացված գնային առաջարկներում չկան թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանություններ:

7.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

7.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

7.2 Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ մասնակցին:

7.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

7.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցին, որպեսզի վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնի իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով նախատեսված հավելված N 3 և հավելված N 3.1-ի:

8. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

8.1 Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և ՀՀ ՊԵԿ-ից Տեղեկատվության ստացման հաջորդող աշխատանքային օրը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Շ. Հարությունյան

_____ Հ. Մելիքյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Ա. Իսկանդարյան

_____ Ա. Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան